157. ***Տրդատակերտը*** Գառնիում կառուցված հոյակապ տաճարն է, որ փլվել էր 1679 թվականի երկրաշարժից և վերակառուցվել է 1970-ական թվերին:

158. ***Խոր Վիրապի*** վանքը գտնվում է Արարատյան դաշտի արևելյան մասում, Փոքր Վեղի գյուղի մոտ, Արաքսի ձախ ափին: Վանքը կառուցվել է 17-րդ դարում Խոր Վիրապի մոտ, որտեղ կալանավորված էր Գրիգոր Լուսավորիչը Տրդատի հրամանով: Գրիգորը չէր երկրպագում կուռքերին:

159. ***Ջրվեժը*** Երևանից արևելք է գտնվում՝ արդեն միացած Երևանին, պահպանում է իր անունը: Այստեղ հայտնի է 12-13-րդ դարերի թաղածածկ եկեղեցին: Հավանորեն սրա մասին է պատմիչի խոսքը: Բայց այստեղ ավելի հին եկեղեցին կառուցվել է 6-7-րդ դարերում:

160. ***Ջագավանքը*** Կոտայքի վանքերից է, Բալահովիտ գյուղից հարավ-արևմուտք Գետառ գետի ափին: Այժմ կոչվում է Գետարգել:

161. ***Նորագավիթը*** Երևանի հարավում, Երևանին կպած գյուղ է:

162. ***Նորագեղը*** Նորագավթին մոտիկ գյուղերից է:

163. ***Գամրեզը***՝ այժմ Կամարիս, Կոտայքի շրջանի գյուղերից է՝ Աբովյան քաղաքից արևելք 7-8 կմ, Աղմաղանի փեշերին, Գեղաշեն մեծ գյուղից արևմուտք, Արամոնքից 3 կմ արևելք:

164. ***Պարտավը*** Մեծ Հայքի Ուտիք նահանգի քաղաքներից է, այժմ կոչվում է Բարդա: 5-րդ դարում հիմնել է Վաչե թագավորը:

165. ***Ջակումը*** Արցախի գյուղերից է եղել, այժմ գոյություն չունի:

166. ***Ակռին*** Մասիսի հյուսիսային լանջին գյուղ էր, որ երկրաշարժից կործանվեց 1840 թվին:

167. **Սաղարակը,** ըստ Ալիշանի, գտնվել է Վեղիի և Շարուրի սահմանների վրա:

168. ***Ծարը*** Մեծ Հայքի Արցախ նահանգի հին գավառներից է:

169. ***Հռիփսիմե վանքը*** հայ ճարտարապետության հրաշալիքներից է, գտնվում է Էջմիածին քաղաքի արևելյան դարպասների մոտ: Կառուցված է 7-րդ դարի կեսերին, մինչև հիմա կանգուն է և ոչ մի ճեղք չի տվել:

170. ***Գայանեի վանքը*** գտնվում է Էջմիածնի հարավ-արևելյան կողմում: Կառուցվել է 7-րդ դարում: Վանքի տանիքը քանդված է եղել, 1651 թվին վերակառուցել է Փիլիպոս կաթողիկոսը:

171. ***Իջման տեղը*** Էջմիածնի վանքում այն կետն է, որտեղ ըստ ավանդության, Գրիգոր Լուսավորիչը երազում տեսել է, որ Քրիստոսը իջել է հենց այդ կետում, երբ վանքը դեռևս կառուցված չէր:

172. ***Զմյուռնիան*** Թուրքիայի Իզմիր քաղաքն է Եգեյան ծովի ափին: 1915 թվից առաջ քաղաքը ուներ 30 հազար հայ բնակիչ:

173. ***Վահան Գողթնացի*** (մոտ 700-737) իշխան: 705-ին Նախճավանի և Խրամի կոտորածի ժամանակ հոր՝ Խոսրովի զոհվելուց հետո, բռնի տարվել

է արաբական խալիֆայություն (Ասորիք) և բռնի հավատափոխ արվել, վերանվանվել Վահապ, դարձել արքունի դպրապետ: Գողթնի իր հայրենի կալվածներին տիրելու, այնտեղ գործակալներ կարգելու նպատակով 717-ին եկել է Հայաստան և այլևս չի վերադարձել: Օմար II խալիֆայի մահից (720) հետո կրկին դարձել է քրիստոնյա և կոչվել Վահան, ամուսնացել Սյունյաց իշխանի դստեր հետ: Սակայն արաբները հետապնդել են նրան, կանչել Ռուսաֆա, որտեղ Հիշամ խալիֆան պահանջել է հրաժարվել քրիստոնեությունից և վերադառնալ արքունիք: Նա հավատարիմ է մնացել իր դավանանքին և նահատակվել: 744-ին նրա վարքը գրի է առել Երաշխավոր վանքի վանահայր Արտավազդ վարդապետը:

174. ***Անբերդ*** հնում կոչվել է ամբողջ Արագածոտն գավառը, իսկ այժմ այն 7-րդ դարում կառուցված բերդամրոց է, որ գտնվում է Արագած լեռան հարավային լանջին 2300 մ բարձրության վրա:

175. ***Աբգարը*** Քրիստոսի ժամանակ Եդեսիայի (ասորիների) թագավորն էր: Եդեսիայում անչափ շատ հայ կար, և Աբգարը կոչվեց հայոց և ասորիների թագավոր:

176. ***Ագաթանգեղոսը*** 5-րդ դարի հայ պատմիչ է, որ գրել է հայերի քրիստոնեություն ընդունելու պատմությունը, Գրիգոր Լուսավորչի կյանքը, և քրիստոնեական վարդապետությունը պարունակող գիրքը:

177. ***Բուզանդը*** (Փավստոս) 5-րդ դարի հայ պատմիչ է: Գրել է հայոց պատմության մի կարճ շրջանի պատմությունը, սկսել է Խոսրով Կոտակից (338) և ավարտել է 387 թվին Հայաստանի բաժանումով:

178. Ներսես Գ կաթողիկոսը ***Շինող*** մականունով հաջորդել է Եզրին 641 թվին, մեռել է 661-62 թվերին: Կառուցել է Դվինի Սուրբ Սարգիսը, Արտաշատի Սուրբ Գրիգորը, Վաղարշապատի Սուրբ Աստվածածին, Վասպուրականի Ջորո վանքը և վերջապես Վաղարշապատի հրաշքը՝ Զվարթնոցը 643-652 թվերին:

179. ***Թորդանը*** Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Դարանաղի գավառի ավան էր Սեպուհ լեռան արևելյան լանջին:

180. ***Մուշեն*** կաթողիկոս էր 526-534 թվերին:

181. ***Երիցակը*** Մուշե կաթողիկոսի կողմից եպիսկոպոս է ձեռնադրվել Սյունիքում իբրև Մուշեի հաջորդ՝ 6-րդ դարի սկզբում:

182. ***Երասխաձորը*** Արշարունիքն է, որ հյուսիսից սահմանակից է Վանանդին (Կարսի շրջան) և Շիրակին:

183. ***Շիրակավանը*** Երազգավորս քաղաքն է Մեծ Հայքի Արարատ նահանգի Շիրակ գավառում, Անիից հյուսիս-արևելք՝ Ախուրյանի աջ ափին: 9-րդ դարում Բագրատունիների թագավորանիստն էր:

184. ***Ափնագեղ***, Ապարանի առաջին գյուղն է Աշտարակի կողմից, այժմ կոչվում է Ափնա: